

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**

**ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ**  
**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

# **ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի կողմից

**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Տարոն Քոչարյանի կողմից

**Հաստատվել է՝** համայնքի ավագանու 2017 թ հունվարի 20-ի թիվ 11- Ն որոշմամբ

**Գ. ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ 2017թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Կարճաղբյուր համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի՝ բուսաբուծության և անասնապահության զարգացման (փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Կարճաղբյուր համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Կարճաղբյուր համայնքի տարածական զարգացումը սահմանող դրույթներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Կարճաղբյուր համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Կարճաղբյուր համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Կարճաղբյուրի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղը վերաբնակվել է 1828-1830 թվականներին: Բնակավայրը գտնվում է Սևանա լճի հարավ-արևելյան ափին, Վարդենիս-Երևան մայրուղու մոտ, մարզկենտրոնից 60 կմ հեռավորության վրա: Գյուղը բնակեցված է եղել մեր թվարկությունից առաջ, սկսած երրորդ հազարամյակից: Կան բազմաթիվ հնագիտական հուշարձաններ, որոնցից հնագույնները համանուն գետի ձորակում ժայռապատկերներն են, կիկլոպյան ամրոցը և միջնադարյան մատուռներն ու խաչքարերը: Գյուղից դեպի արևմուտք մոտ 2 կմ-ի վրա հայտնաբերվել է անտիկ ժամանակաշրջանի բնակավայր, որը զբաղեցնում է 4 հա տարածք և կառուցված է եղել կանոնավոր հատակագծով:

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1990-2006 մետր բարձրության վրա: Գյուղից վերև գյուղացիական տնտեսություններին սեփականաշնորհված հողատարածքներն են:

Խմելու ջրագծով գյուղի «Ներքին թաղամասը» ապահովված է այդ տարածքում գտնվող աղբյուրներով, իսկ մնացած մասը՝ հարևան Լճավան գյուղից եկող ջրագծով:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը զով, հաճախակի են չորային, երաշտի տարիներ:

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2017 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները                                               | Մարդ |
|-----|------------------------------------------------------------|------|
| 1.  | Բնակչության թվաքանակը, մարդ                                | 2517 |
| 2.  | Տնային տնտեսությունների թվաքանակը                          | 752  |
| 2.1 | այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | 2    |
| 2.2 | կիսակառույց տներում բնակվող                                | 0    |
| 3.  | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը                  | 142  |

Համայնքի բնակչության 53% կազմում են տղամարդիկ և 47% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2017 թ. դրությամբ)**

| Ը/Ը | Ցուցանիշները                                                      | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|-----|-------------------------------------------------------------------|----------|--------|-----------|
| 1.  | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝                             | 2517     | 1183   | 1334      |
|     | մինչև 1 տարեկան                                                   | 34       | 15     | 19        |
|     | 1-2 տարեկան                                                       | 37       | 15     | 22        |
|     | 3-4 տարեկան                                                       | 34       | 15     | 19        |
|     | 5-6 տարեկան                                                       | 30       | 13     | 17        |
|     | 7-10 տարեկան                                                      | 101      | 50     | 51        |
|     | 11-14 տարեկան                                                     | 112      | 52     | 60        |
|     | 15-17 տարեկան                                                     | 114      | 51     | 63        |
|     | 18 և ավելի տարեկան                                                | 2055     | 972    | 1083      |
| 2.  | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝              | 394      | 274    | 120       |
|     | Տարիքային և աշխատանքային                                          |          |        |           |
| 3.  | Միակողմանի ծնողագուրկ երեխաներ                                    | 9        | 6      | 3         |
| 4.  | Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ                                    |          |        |           |
| 5.  | Հաշմանդամ երեխաներ                                                | 3        | 1      | 2         |
| 6.  | Խնամակալության հանձնված երեխաներ                                  | 1        |        | 1         |
| 7.  | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ                              | 1        |        | 1         |
| 8.  | Արցախյան պատերազմի մասնակիցներ                                    | 31       |        | 31        |
| 9.  | Հաշմանդամներ                                                      | 75       | 47     | 28        |
| 10. | Զբաղվածներ                                                        | 1330     |        |           |
| 11. | Գործազուրկներ                                                     | 350      | 230    | 120       |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 157      |        |           |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը                  | 6        |        |           |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ԿԱՐՃԱՂԵՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կ Ա Ռ ՈՒ Յ Վ Ա Ծ Ք

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկված են՝

1. Կարճաղբյուր համայնքի ղեկավար
2. Կարճաղբյուր համայնքի ղեկավարի տեղակալ

3. Աշխատակազմի քարտուղար
4. Աշխատակազմի համայնքային ծառայողներ
5. Աշխատակազմի այլ աշխատակիցներ:

### **ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

Կարճադրյուր համայնքի ղեկավարը վերընտրվել է 7-րդ անգամ անընդմեջ 2016թ. հոկտեմբերի 2-ին: Համայնքի ավագանին / բաղկացած 7 անդամներից/ ընտրվել են 2016թ. հոկտեմբերի 2-ին:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 18 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով:

1. Համայնքի ղեկավար - 1
2. տեղակալ - 1
3. համայնքային ծառայողներ - 7
4. այլ աշխատող - 9

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Համայնքը նախկինում ունեցել է արդյունաբերական ձեռնարկություններ: Այժմ այդ արդյունաբերական ձեռնարկությունները չեն գործում:*

*Համայնքի տարածքում ներկայումս գործում է <<Սևանի Իշխան>> ձեռնարկությունը:*

### **ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

- Բնակելի տների քանակը համայնքում կազմում է 471 միավոր, 33000 քմ ընդանուր մակերեսով:
- Համայնքում առկա են բնակարանների և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ, որոնց մեծ մասը կազմում են երիտասարդ նորաստեղծ ընտանիքները, մի մասը կազմում են զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներ:

### **ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Համայնքի վարչական տարածքը -5687 հա  
 վարելահողեր – 1123 հա,  
 խոտհարքներ – 183 հա,  
 արոտավայրեր – 3185 հա,  
 դաշտային ճանապարհներ – 4.0 հա,  
 արտադրական մասեր – 14.0 հա,  
 անօգտագործելի հողեր –  
 համայնքապետարան – 1.0 հա,  
 մանկապարտեզ - 0.5 հա,  
 դպրոց – 1.0 հա,  
 գերեզմանոց – 3.0 հա,  
 տնամերձ հողամասեր – 264.0 հա,

սեփականաշնորհված հողեր – 1008 հա,  
պահուստային հողեր – 212 հա:

- 1 Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը - 810
- 2 Մեկ հողաբաժնի չափը 0.85 հա
- 3 Համայնքային սեփականություն համարվող հողեր – 1490.1 հա
- 4 Պետական սեփականություն հանդիսացող հողեր – 2899.2 հա

### **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Համայնքում գործում է խմելու ջրի ջրամատակարարման ինքնահոս համակարգ: Այն սպասարկվում է համայնքապետարանի կողմից, որի ոչ բավարար մակարդակը պայմանավորված է ներքին կոմունիկացիոն ցանցի ֆիզիկական մաշվածությամբ:
- Համայնքում աղբահանությունը կատարվում է անհատական ձևով, որի համար հատկացվել է առանձին տարածք:
- Ամեն գարնանը համայնքում անցկացվում են շաբաթօրյակներ՝ գյուղի սանիտարական մաքրությունը պատշաճ մակարդակի վրա պահելու համար:
- Ոռոգման համակարգի նոր ջրագծերի անցկացման աշխատանքներ:

### **ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

- Համայնքի փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 12 կմ, իսկ մակերեսը՝ 39000քմ, կամուրջների քանակը՝ 6:
- Համայնքի վարչական տարածքից մինչև Երևան ուղևորափոխադրումները իրականացվում է միկրոավտոբուսների միջոցով:

### **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ**

- Համայնքի տարածքում առևտրի փոքր օբյեկտներ - 8

### **ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ**

Գյուղն ունի միջնակարգ դպրոց:Դպրոցի շենքը ենթարկվել է հիմնական վերանորոգման:  
Դպրոցում աշակերտների թիվը կազմում է 315,իսկ ուսուցիչներինը՝45:

Դպրոցը ապահովված է մանկավարժական կադրերով:

Մտոր-մանկապարտեզի շենքը հիմնական վերանորոգման է ենթարկվել, մանկապարտեզում երեխաների թիվը կազմում է 67, իսկ աշխատողների թվաքանակը՝ 12:

Համայնքը ունի մշակույթի տուն,որը 2008 թվին ենթարկվել է հիմնանորոգման:Մշակույթի տան համար ձեռք է բերվել գույք և բեմի կահավորում:Մշակույթի շենքում է գտնվում գրադարանը:

Մարզահրապարակ չունենալու պատճառով,երիտասարդությունը սպորտով քիչ է զբաղվում: Նախատեսված է մարզահրապարակի կառուցում և հանգստի գոտիների ստեղծում:

Կառուցվել է հուշարձան-կոթող,պատերազմի զոհվածների հիշատակին և բարեկարգվել է տարածքը,ծառատնկվել և ստեղծվել է հանգստի գոտի:

## **Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Համայնքում գործում է առողջության առաջնային պահպանման կենտրոն, վերանորոգված է և գտնվում է բարվոք վիճակում:Աշխատողների թվաքանակը 9 է,ապահովված է ժամանակակից գույքով և սարքավորումներով:

### **2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

Կարճադրյուր գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 20-ի N 10-Ն որոշմամբ հաստատված 2017 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **56575.5** հազար դրամ, ծախսերի գծով՝ **56575.5** հազար դրամ: 2017թ. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գումարը կազմում է 7180.5 դրամ, կամ համայնքի բյուջեի սեփական եկամուտների բաժինը կազմում է **13.0%**:

### **Աղյուսակ 3. Կարճադրյուր համայնքի հանրակրթական դպրոցի, նախադպրոցական ուսումնական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը               | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|-----|--------------------------------------|------------------|------------------|
| 1.  | Կարճադրյուրի միջնակարգ դպրոց         | 45               | 315              |
| 2.  | Կարճադրյուր գյուղի թիվ 1 մանկապարտեզ | 12               | 67               |

### **2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ**

Համայնքում իրականացվում է ՄԱԶԾ-ԵՄ կողմից <<Հայաստանում տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով արոտավայրերի և անտառների կայուն կառավարում>> Կլիմա Իստ պիլոտային ծրագիր:



## 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

**Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

| Հ/հ | Մուտքերի անվանումը                                                         | հազար դրամ   |                |              |              |              |              |              |
|-----|----------------------------------------------------------------------------|--------------|----------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
|     |                                                                            | 2015թ. փաստ. | 2016թ. փաստացի | 2017թ. կանխ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|     | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*                                  | 52101.9      | 51163.5        | 56575.5      | 58190.5      | 59750.5      | 61650.5      | 63370.5      |
| I.  | ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ                                                | 7603.1       | 6665.3         | 7180.5       | 7180.5       | 7350.5       | 7560.5       | 7770.5       |
| 1   | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ                                                          |              |                |              |              |              |              |              |
| 1.1 | Գույքահարկ                                                                 | 2950.5       | 2671.9         | 2950.0       | 2950.0       | 3000.0       | 3200.0       | 3400.0       |
|     | Հողի հարկ                                                                  | 2730.5       | 2654.8         | 3430.5       | 3530.5       | 3530.5       | 3530.0       | 3530.0       |
|     | Տեղական տուրքեր                                                            | 120.0        | 136.9          | 100.0        | 110.0        | 120.0        | 130.0        | 140.0        |
|     | Վարձավճարներ                                                               | 802.6        | 577.6          | 700.0        | 700.0        | 700.0        | 700.0        | 700.0        |
|     | Այլ եկամուտներ                                                             |              | 624.1          |              |              |              |              |              |
| 2   | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ                                    |              |                |              |              |              |              |              |
| ա)  | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 44498.4      | 44498.4        | 49395.0      | 50900.0      | 52400.0      | 54000.0      | 55600.0      |
| բ)  | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)        | 295.0        | 295.0          |              |              |              |              |              |

\* Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

**Աղյուսակ 5. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամտների և ծախսերի կանխատեսումը)**

| Եկամտի և ծախսի տեսակը                                    | 2015թ. տարեկան<br>պլան | 2017թ.<br>կանխ. | 2015թ.<br>փաստ. նկար % | 2018թ.<br>կանխ. | 2015թ.<br>փաստ. նկար % | 2019թ.<br>կանխ. | 2015թ.<br>փաստ. նկար % | 2020թ.<br>կանխ. | 2015թ.<br>փաստ. նկար % | 2021թ.<br>կանխ. | 2015թ.<br>փաստ. նկար % |
|----------------------------------------------------------|------------------------|-----------------|------------------------|-----------------|------------------------|-----------------|------------------------|-----------------|------------------------|-----------------|------------------------|
| <b>Ընդամենը եկամուտներ</b>                               | 52101.9                | 56575.5         | 8.0                    | 58190.5         | 11.7                   | 59750.5         | 14.7                   | 61650.5         | 18.3                   | 63370.0         | 21.6                   |
| Հողի հարկ                                                | 2730.5                 | 3430.5          | 25.6                   | 3530.5          | 29.3                   | 3530.5          | 29.3                   | 3530.5          | 29.3                   | 3530.5          | 29.3                   |
| Գույքահարկ                                               | 2950.0                 | 2950.0          | 0                      | 2950.0          | 0                      | 3000.0          | 1.7                    | 3200.0          | 8.5                    | 3400.0          | 15.3                   |
| Տեղական տուրքեր                                          | 120.0                  | 100.0           | -17.0                  | 110.0           | -9.0                   | 120.0           | 0                      | 130.0           | 8.0                    | 140.0           | 16.7                   |
| Վարձավճարներ                                             | 802.6                  | 700.0           | -13.0                  | 700.0           | -13.0                  | 700.0           | -13.0                  | 700.0           | -13.0                  | 700.0           | -13.0                  |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն.                              | 44498.4                | 49395.0         | 11.0                   | 50900.0         | 14.4                   | 52400.0         | 17.8                   | 54000.0         | 21.4                   | 55600.0         | 25.0                   |
| <b>Ընդամենը ծախսեր</b>                                   | 50413.2                | 56575.5         | 12.2                   | 58190.5         | 15.4                   | 59750.5         | 18.5                   | 61650.5         | 22.2                   | 63370.0         | 25.7                   |
| այդ թվում մանկապարտեզ                                    | 11000.0                | 13200.0         | 20.0                   | 13750.0         | 25.0                   | 14000.0         | 27.3                   | 14300.0         | 30.0                   | 14700.0         | 33.6                   |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ | 23154.8                | 25580.8         | 10.5                   | 26100.0         | 13.0                   | 26500.0         | 14.2                   | 26850.0         | 15.9                   | 27500.0         | 18.5                   |

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն գյուղամիջյան ճանապարհները, խմելու ջրի խողովակաշարերը.

- սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսը, ցածր աշխատավարձի առկայությունը
- Ոռոգման ջրի արտաքին համակարգի մշակվածությունը

Գյուղի տարածքում ձեռնարկությունների գործունեության դադարեցումը դժվարություններ է առաջացրել գյուղի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## **2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

Համայնքը ունի ավելի քան 240 ԲՈՒՀ-ի շրջանավարտ տարբեր մասնագիտությունների գծով, որոնք կարող են կազմակերպել մշակութային, կրթական, շինարարական, արտադրական աշխատանքներ:

Բնակավայրը գտնվում է Սևանա լճի ափին, որտեղ հնարավոր է կառուցել հանգստյան տներ, ստեղծել հանգստի գոտիներ, որը կլուծի և աշխատատեղերի և միջոցների ձևավորման խնդիրներ:

Աղբյուրների մշտական ջրի առկայություն և ռելիեֆի բարենպաստ պայմաններ՝ ֆինանսական միջոցներ ներդնելու դեպքում փոքր ՀԷԿ-երի կառուցում և շահագործում:

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների, խմելու ջրի ներքին ցանցի և ոռոգման ջրի անմխիթար վիճակը:

Ծնելիության նվազում կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ:

Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

Գործազրկության բարձր մակարդակ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության նվազման, անասնապահական արտադրության մթերատվության անկման պատճառով, համայնքի բնակչության եկամուտների նվազումը: Գյուղ արտադրանքի իրացման խնդիր:

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մեծ աշխատուժի հնարավորություն:

Աղբյուրների, ամռան ամիսներին մասնաձյան հալոցքի ջրերի առկայություն:

### **ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

- Ոռոգման ջրի ներհամայնքային համակարգի մաշվածությունը
- Գյուղում գործազրկության բարձր տոկոսը
- Բնակչության անվճարունակ լինելը

## **3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

### **3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ**

Կարճադրյուրի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Գյուղի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով գյուղի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել հանգստի գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 6-ում:

**Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները                                                                                                            | 2017  | 2018  | 2019  | 2020  | 2021  |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|-------|-------|-------|-------|
| 1.  | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)     | 20.2% | 20.0% | 19.8% | 19.6% | 19.4% |
| 2.  | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով                                                            | 8.0%  | 8.0%  | 10.3% | 13.4% | 16.5% |
| 3.  | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 1.2%  | 1.3%  | 1.4%  | 1.6%  | 1.8%  |

### 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

Գյուղում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել բարեկեցիկ և բարեկարգ:

- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- ապահովել գյուղի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ.
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- բարձրացնել գյուղի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով գյուղի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները.
- Համայնքում կառուցել մարզահրապարակ.
- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում.

- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները.
- Համայնքում իրականացնել ճանապարհների ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ.
- համայնքապետարնի ենթակայության հաստատություններում իրականացնել գույքային և տեխնիկական վերազինում.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ Խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգում,
- ✓ Համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատում և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում,
- ✓ Վարչական շենքի մասնակի վերանորոգում,
- ✓ Համայնքի փողոցների լուսավորության ցանցի ավելացում,
- ✓ Խմելու ջրագծի արտաքին ցանցի վերանորոգում,
- ✓ Մարզահրապարակի կառուցում,
- ✓ Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում:

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր ՈՒ

«Խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգում»  
(Ծրագրի անվանում)

|                                               |                                                  |
|-----------------------------------------------|--------------------------------------------------|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգում |
|                                               |                                                  |

|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                  |                    |         |         |         |         |
|----------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|--------------------|---------|---------|---------|---------|
| Ծրագրի անմիջական նպատակ՝<br><b>Համայնքի բնակչությանը ապահովել շուրջօրյա ջրամատակարարմամբ</b> | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 0                | 13000.0            | 13000.0 | 13000.0 | 13000.0 | 13000.0 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ                                                                 | 1.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |                  |                    |         |         |         |         |
|                                                                                              | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 0                | 13000.0            | 26000.0 | 39000.0 | 52000.0 | 65000.0 |
|                                                                                              | 2.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |                  |                    |         |         |         |         |
|                                                                                              | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 0                |                    |         |         |         |         |
| Ծրագրի հիմնական գործողությունները                                                            | <p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>1.2. Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը</p> <p>1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Իրականացնել աշխատանքները</p> <p>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</p> |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի բյուջեն                                                                               | <p>Ընթացիկ ծախսեր՝ 13000.0 հազար դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 52000.0 հազար դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 65000.0 հազար դրամ</p>                                                                                                                                                                                                                                                                                                             |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ                                            | Աշխատուժ, տեխնիկա                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի հիմնական ռիսկերը                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի հիմնական շահառուները                                                                  | Համայնքի բնակիչները                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի սկիզբ և ավարտ                                                                         | 2017-2021թթ.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի համառոտ նկարագրություն                                                                | Ծրագիրը ընդգրկում է ամբողջ համայնքի բնակելի կառուցապատման գոտին, այն կնպաստի համայնքի բնակիչների 100%-ով շուրջօրյա խմելու ջրով ապահովելու, կնվազի ջրի կորուստը, կբարելավվի բնակչության սոցիալ կենցաղային պայմանները:                                                                                                                                                                                                                         |                  |                    |         |         |         |         |

« Համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատում և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում»  
(Ծրագրի անվանում)

|                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  |                    |         |         |         |         |
|-----------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|--------------------|---------|---------|---------|---------|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը                                                       | Համայնքի ճանապարհների ասֆալտապատում և բարեկարգում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Ունենալ նորոգված և բարեկարգ ճանապարհներ                                 | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | -                | 12000.0            | 12000.0 | 12000.0 | 12000.0 | 12000.0 |
